ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «24» 11 2016թ. № 1246-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄՈՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 11-ի N 1229-Ն որոշման Հավելված N 1-ի 13-րդ կետի բ, դ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ 2016 թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 11:00-ին կայացած խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականները (այսուհետ՝ Հանձնարարականներ).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, Նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել Հանձնարարականների կատարումը՝ համաձայն Հավելվածի:

2. Նախարարության աշխատակազմի ղեկավարին՝

   1) ամենօրյա հսկողություն սահմանել ՀՀ կառավարության ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման, գերակա խնդիրների լուծման, աշխատանքային կարգապահության, հանձնարարականների կատարման որակի և ժամկետայնության նկատմամբ,

   2) յուրաքանչյուր երկուշաբթի Նախարարին զեկուցել Հանձնարարականների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2016թ. ..... N .....-Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄՈՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ

ՀՀ	Կետ	Հանձնարարական	Ժամկետ	Պատասխանատու
1.	1.1.1	Ներկայացնել առաջարկություններ ղեկավարվող պետական մարմնի և ենթակա կառույցների անարդյունավետ և կրկնվող (այդ թվում՝ այլ գերատեսչությունների հետ) գործառույթները, դրան համապատասխան՝ պետական մարմնի և ենթակա կառույցների կառուցվածքը և հաստիքացուցակը կրճատելու վերաբերյալ	29 նոյեմբեր, 2016թ.	Անձնակազմի կառավարման վարչություն
2.	1.1.2	Ներկայացնել առաջարկություն համապատասխան ոլորտում գնումների գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ (այդ թվում՝ ըստ անհրաժեշտության ավելի բարձր կառավարչական մակարդակով կենտրոնացված գնումներ կազմակերպելու միջոցով)	29 նոյեմբեր, 2016թ.	Ֆինանսա-բյուջետային վարչություն
3.	1.2.1	ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա՝ լրամշակել համապատասխան ոլորտում կառավարության միջոցառումների և գերակա խնդիրների ծրագիրը, հատուկ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերի նպատակայնության, որոշակիության, չափելիության և ժամկետայնության վրա, և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ	-	Տնտեսական զարգացման քաղաքականության վարչություն
4.	1.2.2	ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա՝ լրամշակել մարմնի 2017թ. աշխատանքային ծրագիրը և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ	-	Անձնակազմի կառավարման վարչություն
5.	1.4	Միջոցներ ձեռնարկել հասարակության հետ հետադարձ կապի պատշաճ ապահովման ուղղությամբ (թեժ գիծ, պատասխանատու պաշտոնատար անձի հետ քաղաքացու շփման հնարավորություն և այլն), շաբաթական պարբերականությամբ կայքին և մամուլին տրվող հաղորդագրությունների միջոցով հանրությանը ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների ընթացքի մասին	-	Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
6.	1.5	Մշակել և ներկայացնել ոլորտի զարգացմանը միտված երկարաժամկետ ծրագրերը, ներառելով նաև այլ ռազմավարական ծրագրերում նախատեսված միջոցառումները (համապատասխան իրավական ակտի նշումով)	21 դեկտեմբեր, 2016թ.	Տնտեսական զարգացման քաղաքականության վարչություն
7.	1.6	Ամփոփել համապատասխան ոլորտում իրականացվող կամ սկսվող վարկային ծրագրերը, քննարկելով դրանց հետագա իրականացման նպատակահարմարության հարցը (այդ թվում՝	23 նոյեմբեր, 2016թ.	Տնտեսական զարգացման քաղաքականության

ՀՀ Կետ	Հանձնարարական	Ժամկետ	Պատասխանատու
	մոկտիպլիկատիվ արդյունքի չափելի գնահատականի վրա հիմնված) և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան տեղեկատվություն		վարչություն
8. 1.7	Ըստ անհրաժեշտության ուղղորդել և խորհրդատվություն տրամադրել ՀԳՄ-ներին և գերատեսչություններին՝ իրենց համակարգման ոլորտում մասնավոր ներդրումների համար գրավիչ ներդրումային ծրագրերի մշակման և ՀՀ ՏՀԼՆ ներկայացման նպատակով	6 դեկտեմբեր, 2016թ.	Ներդրումային քաղաքականության վարչություն
9. 1.7.1	Ամփոփել հեռանկարային ծրագրերը և ներկայացնել օտարերկրյա պետություններում հավատարմագրված դեսպաններին	13 հունվար, 2017թ.	Ներդրումային քաղաքականության վարչություն
10. 1.8	ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն՝ մարմնի գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշերի (ներառյալ աշխատատեղերի, ներդրումների ծավալների, մասնագիտական կրթական ծրագրերի, դրամաշնորհների և այլնի) վերաբերյալ	14 դեկտեմբեր, 2016թ.	Տնտեսական զարգացման քաղաքականության վարչություն
11. 2.1	Մշակել և ՀՀ ԱԳՆ ներկայացնել առաջարկություններ օտարերկրյա դեսպանություններում հավատարմագրված ՀՀ դեսպանների համար հստակ թիրախներ սահմանելու նպատակով՝ համապատասխան երկրներից օտարերկրյա ներդրումների, առևտրային շրջանառության, արտահանման և զբոսաշրջիկների թվի աճի վերաբերյալ	-	Ներդրումային քաղաքականության վարչություն
12. 2.2	Մշակել և ՀՀ ԱԳՆ ներկայացնել առաջարկություններ օտարերկրյա պետություններում հավատարմագրված ՀՀ դեսպանների և ՀՀ ՏՀԼՆ հետ կապի մշտական գործող մեխանիզմի վերաբերյալ	-	Միջազգային տնտեսական համագործակցության վարչություն
13. 4.9	Ներկայացնել առաջարկություններ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը համայնքային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների պատվիրակման մոդելների վերաբերյալ, որոնք կարող են ավելի մատչելի և որակով մատուցվել մասնավոր հատվածի կողմից (օրինակ՝ աղբահանություն, լուսավորություն և այլն)	18 հունվար, 2017թ.	Արդյունաբերության զարգացման վարչություն
14. 5.1	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի հետ համատեղ ներկայացնել առաջարկություն ներդրումային ֆոնդի ստեղծման վերաբերյալ՝ հստակ նշելով տեղեկատվություն՝ – այն գույքի մասին, որը ենթակա կլինի վերակառուցման՝ հետագայում ներդրումային ծրագրերում օգտագործելու ակնկալիքով, – այն գույքի մասին, որը ենթակա կլինի օտարման և դրա արդյունքում ստացված ֆինանսական միջոցները ներդրումային ֆոնդի կողմից կօգտագործվեն կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով	-	Ներդրումային քաղաքականության վարչություն
15. 5.2	Ներկայացնել զբոսաշրջության զարգացման ծրագիր՝ հաշվի առնելով Գյումրու օդանավակայանի շահագործման և	-	ՀՀ ՏՀԼՆ զբոսաշրջության

ՀՀ Կետ	Հանձնարարական	Ժամկետ	Պատասխանատու
	բյուջետային թռիչքներ իրականացնելու նոր հնարավորությունը		պետական կոմիտե
16. 5.3	Ուսումնասիրել և ներկայացնել օտարերկրյա պետություններում առևտրային ներկայացուցչությունների գործունեության նպատակահարմարության վերաբերյալ առաջարկություն, ինչպես նաև քննարկել նշված գործառույթները ՀՀ դեսպանատների միջոցով իրականացնելու հնարավորությունը	28 նոյեմբեր, 2016թ.	Եվրամիության և ԱՀԿ վարչություն Միջազգային տնտեսական համագործակցության վարչություն
17. 5.4	Ձևավորել հարթակ, որով կապահովվի պարբերական հետադարձ կապ տնտեսավարող սուբյեկտների և հնարավոր ներդրողների հետ	-	Գործարար միջավայրի բարելավման վարչություն
18. 5.5	ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել և մշակել մեխանիզմներ, որով հնարավորություն կտրվի օտարերկրյա ներդրողներին և կազմակերպություններին ծանոթանալ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերին: Ձեռնարկված քայլերի մասին տեղեկացնել ՀՀ կառավարության աշխատակազմ	Սկսած նոյեմբերի 30-ից՝ ամսական պարբերականությամբ	Միջազգային տնտեսական համագործակցության վարչություն